



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

206.4

2-17

LIXZ

458

айрено баале тохсон

~~392~~

Александръ Александровичъ

~~А 146~~

~~А 277~~

166

~~#146~~  
~~#277~~

№ 5



Ժ Ո Ղ Ո Վ Դ Ի Ա Վ Ա Ն Գ Ի Ր Ա Գ Ո Ր Ո Ն

149 ար.  
458

166

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԻՈՐԻՉՆԵՐ

# ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ

1890  
0701

Գինն է Հինգ-կոպեկ.



1283

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսես Վարդանեացի

1887

1/10

ПАСПОРТЪ  
УЧЕБНОГО ОБЩЕСТВА  
\* ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ \*



ՍՈՒՐԲ

## ԹԱԿԷՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ

Քրիստոնէական Եկեղեցւոյ Հիմնադիրն է Յիսուս Քրիստոս, որ ծնուեց Նրէաստանի Բէթղեհեմ քաղաքում Ս. կոյս Մարիամից: Յիսուսի ծննդեան ժամանակ Նրէաստանը գտնվում էր հռովմայեցւոց իշխանութեան տակ. մարգարէից գուշակութեան համեմատ՝ ժամանակն էր

Дозволено Цензурою 24 Апрелья 1887 г. Тифлист.  
Типографія М. Вартамянца. Тройц. пер. д. № 11

458

458-2009

Մեսիայի (Փրկչի, Քրիստոսի) գալստեան և հրէից փրկուածեան. ուստի շատերը աշխատում էին իբրև մեսիայ ընդունուել, իսկ ժողովուրդը ում մէջ տեսնումէր մի արտաքոյ կարգի շնորհք, համարումէր թէ նա կրլինի Մեսիան: Հէնց այս ժամանակներն էլ Յովհաննէս Մկրտիչը մկրտումէր և քարոզում և շատ հետևողներ ունէր: Յիսուս ևս երեսուն տարեկան հասակում Յովհաննէս Մկրտչից Յորդանան գետում մկրտուելուց յետոյ սկսեց քարոզել Գալիլիայի և ամբողջ Հրէաստանի մէջ: Նա յանդիմանելով փարիսեցիների և դպիրների, ծերերի ու օրինականների տմարդի (վատ) գործերը, քարոզում էր մարդասիրութիւն, եղբայրսիրութիւն, ճշմարիտ աստուածապաշտութիւն և սղորմածութիւն:

Յիսուս Քրիստոսի խօսքերը աւելին ներգործումէին, մանաւանդ այն ժամանակ, երբ նա հրաշքներ էլ էր գործում և այսպէս ոչ միայն հետևողներ, այլ և իւր աստուածային վարդապետութիւնը ունեցաւ քարոզողներ ևս, որոնք կոչուեցին առաքեալ:

Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պատճառով նախանձոտ, չարասէր և շահամոլ քահանայապետներն ու դպիրները Յիսուսին կորցնելու համար նորան մատնեցին Հռովմայեցւոց իշխանութեանը որպէս քաղաքական յանցաւոր, վկայելով թէ նա ինքն իրան Հրէից թագաւոր է անուանում և ժողովրդին մոլորեցնումէ ու գրգռում Հռովմայեցւոց դէմ: Հռովմայեցւոց կողմից դատաւոր կարգուած Պոնտացի (Տրապիզոնի կողմերը) Պիղատոսը այս չարախօսութեան համար երբ Յիսուսին հարց ու փորձ անելով տեսաւ թէ ոչինչ այն-

պիսի մի բան չըկայ՝ կամեցաւ արձակել, բայց հրէից ժողովուրդը գրգռուած քահանայապետներից, դպիրներից ու փարիսեցիներից սկսեց աղաղակել և Պիղատոսին ասել. «Եթէ Յիսուսին արձակես, կայսերին բարեկամ չես, որովհետև նա ինքն իրան հրէից թագաւոր է անուանում և ով որ իրան թագաւոր կանուանի, հակառակ է կայսերին: Պիղատոսը պարտաւորուեց Յիսուսին իբրև քաղաքական յանցաւորի՝ խաչի դատապարտել և ըստ սովորութեան յանցանքը գրում էին յանցաւորի խաչի վերայ. Յիսուսի խաչի վերայ ևս գրել տուեց. «Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից:»

Յիսուսը իւր մահուան երրորդ օրը յարութիւն առաւ և քառասուն օր երկրիս վերայ մնալով՝ երբեմն երբեմն երևումէր աշակերտներին և քաջալերում:

Իւր յարութեան քառասներորդ օրը իւր աշակերտների հիտ միասին բարձրանալով Զիթենեաց (Երուսաղեմի մօտ.) սարը՝ տալով աշակերտներին առաքելութեան իրաւունք, մխիթարելու և շնորհք տալու համար խոստանալով ուղարկել Ս. Հոգին՝ համբարձաւ երկինք և նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը: Առաքեալները Ս. Հոգու շնորհքը ընդունելուց յետոյ ցրուեցին զանազան աշխարհներ իրանց առաքելութեան պաշտօնը կատարելու և քարոզելու ու մկրտելու Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Յիսուսի ծննդեան ժամանակ Հայաստանն ևս Հռովմայեցւոց իշխանութեան տակ էր. և Հալոց թագաւորն էր Աբգար քաջ և իմաստուն Արշակունի թագաւորը: Աբգար տեսնելով Հռովմայեցւոց անասելի հպարտու-

Թիւնները Պարսից դաշնակցութեամբ կամենումէր Հը-  
 ուովմայեցւոց իշխանութիւնց ազատուել, լսեց որ Պար-  
 սից Արշաւիր Արշակունի կամ Պահլաւիկ թագաւորը  
 մեռնելով, թագը ձեռք բերելու համար խռովութիւն  
 է ծագել նորա որդւոց մէջ, գնաց Պարսկաստան խռո-  
 վութիւնը դադարեցրեց, բայց վերագարձին անբուժելի  
 հիւանդութեամբ տկարացաւ: Հրէաստանի թագաւոր  
 Հերովդէսն արդէն թշնամութիւն ունենալով Աբգարի  
 դէմ, Հռովմայեցւոց գործակալների կասկածը ևս ա-  
 ուաւել սաստկացրեց, հաւատացնելով որ Աբգարի Պարս-  
 կաստան գնալը Հռովմայեցւոց դէմ դաշնակցութիւն  
 կապելու համար էր: Աբգարը որովհետև միջոց չունէր  
 իւր մտադրութիւնը կատարելու, Պաղիստինէ Հռովմա-  
 յեցւոց Մառինոս իշխանի մօտ դեսպաններ ուղարկեց  
 յայտնելու որ ինքն գնացել է Պարսկաստան ոչ թէ  
 ընդ դէմ Հռովմայեցւոց դաշնակցութիւն կապելու, այլ  
 իւր ազգակից թագաւորի որդւոց մէջ խաղաղութիւն  
 հաստատելու: Այս դեսպանները Երուսաղեմում տեսան  
 Յիսուսին՝ որ հրաշքներ էր գործում և քարոզութիւն  
 անում. լսեցին որ Հրէից մեծամեծները դժգոհ էին  
 Յիսուսից և կամենում էին սպանել տալ. ուստի երբ  
 վերագարձան՝ պատմեցին Աբգարին ինչ որ տեսել և լսել  
 էին Յիսուսի մասին: Աբգարը հաւատալով թէ այնպիսի  
 հրաշքներ գործող Յիսուս Քրիստոսը կամ Աստուած է  
 կամ Աստուծոյ որդի, որ եկել է մարդիկներին փրկե-  
 լու, հրաւիրեց իւր մօտ՝ իւր Եղեսիայ մայրաքաղա-  
 քում հանգիստ ապրելու և իրան բժշկելու:

Յիսուս Քրիստոս թէև ինքը չըկարողացաւ գալ

Եղեսիա, բայց նամակով գովեց Աբգարի հաւատը և  
 խոստացաւ իւր աշակերտներից մէկին ուղարկել նորան  
 բժշկելու և Հայերին քրիստոնէական հաւատոյ լուսով  
 լուսաւորելու:

Հոգեգալստից յետոյ՝ Յիսուսի խոստման համեմատ  
 Թադէոս առաքեալը ՅՅ թ. եկաւ Եղեսիա, բժշկեց  
 Աբգարին, քարոզեց և Աբգարին բոլոր քաղաքացւոց  
 հետ մկրտեց: Աբգարի հրամանով կուռքերի մեհեանների  
 (աղօթատուն) դռները փակեցին, բազիլիկների (կռքերի)  
 տների և սիւների վերայ եղած հեթանոսական պատկեր-  
 ները ծածկեցին. և թէև ստիպմունք չըկար, բայց հա-  
 ւատացեալները օր ըստ օր է բազմանում էին:

Թադէոս առաքեալը Եղեսացւոց վերայ Աբգարի  
 թագ շինող Ադգէին Եպիսկոպոս ձեռնադրելուց յետոյ,  
 Աբգարի հրովարտակով գնաց Հայաստանի գանազան  
 կողմերը՝ քրիստոնէութիւնը քարոզելու:

Թադէոսն Աբգարի հրովարտակը ձեռքին հասաւ  
 վերին Հայք (Երզրուսի կողմերը), ուր մկրտեց տեղւոյն  
 կուսակալ Աբգարի քեռորդի Սանատրուկին իւր ընտա-  
 նիքով և ամբողջ Շաւարշան կամ Արտազ (Իւչ քիլիսայի  
 մօտերքը) գաւառի բնակիչներին. և եպիսկոպոս ձեռ-  
 նադրելով Զաքարիա անուն մի հաւատացեալի՝ ինքը  
 գնաց Ադուանից աշխարհը քարոզելու:

Իսկ Աբգարը բացի նորանից՝ որ իւր աշխարհի քրիս-  
 տոնէութիւն ընդուելու պատճառ դարձաւ, երկու թուղթ  
 գրեց Հռովմայեցւոց Տիբերիոս կայսերին գանգատելով՝  
 որ Հրէայք չարութեամբ Յիսուսին ՚ի գուր տեղը խաչե-  
 ցին: Թուղթ գրեց նաև Ասորեստանի Ներոէհ և Պարս-

կաստաւի Արտաշէս թագաւորներին, չորդորելով որ քրիստոնէութիւն ընդունեն և թալ տան Քրիստոսի առաքեալներին ազատ քարոզութիւն անել: Աբգար դեռ իւր թղթերի պատասխանը չստացած 38 տարի թագաւորելուց յետոյ Փրիկչի 36 թուին մեռաւ: Նորան յաջորդեցին Եդեսիայում իւր որդին Անանուն, իսկ Վերին Հայաստանում՝ իւր քեռորդին Սանատրուկ:

Աբգարի մահից յետոյ քրիստոնէութիւնը սկսեց հետզհետէ թուլանալ. նախարարները երկիւղից ընդունած լինելով քրիստոնէութիւնը, նորից կռապաշտութեան մէջ ընկան և Սանատրուկ քաջուելով նախարարներից՝ հետևեց նոցա:

Անանուն նոյնպէս ուրացաւ քրիստոնէութիւնը և երբ առաջարկեց Ադգէ եպիսկոպոսին իւր համար թագ շինել ու նա յանձն չառաւ ասելով թէ, «իմ ձեռքերը կռապաշտ թագաւորի համար թագ չեն շինել.» Անանուն բարկացաւ և նահատակել տուեց նորան:

Նախարարները և թագաւորները ի մանկութենէ մեծացած լինելով կռապաշտութեան մէջ, հեշտ կերպով չէին կարող հրաժարուել այն բոլոր հեշտութիւններից, որոնց արգելք էր լինում քրիստոնէութիւնը: Ս. Թադէոս Աղուանից աշխարհում իւր առաքելութեան պաշտօնը կատարելով անցաւ Կապադովկիա (Փոքր Ասիա), ուր եպիսկոպոս ձեռնադրելով իւր Թէոփիլոս աշակերտին՝ երբ դառնում էր Հայաստան՝ ճանապարհին նորան հանդիպեցին Հռոմայեցուց ղեսպանները, որոնք զալիս էին Սանատրուկի մօտ. ղեսպանների գլխաւորի անունն էր (Խրիւսի) Ոսկի, ուստի և ղեսպանութիւնը

կոչուում էր Ոսկեան: Ոսկեանք լսելով Ս. Թադէոս առաքեալի քարոզութիւնը, հաւատացին և մկրտուեցին: Ս. Թադէոս քարոզելով և իւր հաստատած եկեղեցիներին այցելելով՝ հասաւ Շաւարշան կամ Արտազ գաւառը: Այդ տեղ շատ քրիստոնէաների և նոյն ինքն արքայադուստր Սանդուխտ Ս. կուսի հետ նահատակուեց Քրիստոսի 48 թուին, 15 տարի Հայաստանում առաքելութեան պաշտօն կատարելուց յետոյ: Ս. Թադէոս առաքեալի և Ս. Սանդուխտ կուսի մարմինը հաւատացեալները ամփոփեցին Շաւարշան գաւառի Սանատրուկ կոչուած դաշտի մի բլրակի գագաթի արևմտեան կողմը մի մեծ քարի տակ:

Ս. ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Հայաստանեայց եկեղեցույ ժողովից հաւաքածոյի մէջ Ս. Թադէոս առաքեալին վերագրած 29 յօդուածով հարց ու պատասխանի ձևով մի օրէնսդրութիւն կայ: Այդ սահմանադրութեամբ Ս. Առաքեալը որոշելով եպիսկոպոսի պարտքը, նշովում, անիծում է նոցա, որոնք կամ կաշառքի պատճառով, կամ բարեկամութեան համար տգէտին եկեղեցու առաջնորդ, վերակացու կրկարգեն և կամ ինչևէ շնորհի կարժանացնեն: Պատուիրում է որ եպիսկոպոսները բոլոր հաւատացեալներին միապէս, հաւասար իրանց քոյրերին ու եղբայրներին սիրեն. կաշառք ամենևին չառնեն, առանց խորհրդակցութեան բան չանեն: Իւրաքանչիւր գաւառի և քաղաքի վերայ տեսուչ կարգեն. մեծ գիւղերում երկու կամ երեք քահանայ և մի սարկաւազ, իսկ փոքր գիւղերում մի քահանայ և մի սարկաւազ կարգեն:

Հաշմանդամներին՝ (կաղերին, կոյրերին...) քահանայ չը  
ձեռնադրեն. առանց քննութեան, առանց վկաների ու ժո-  
ղովրդեան հաւանութեան քահանայ չըձեռնադրեն, հա-  
մարելով որ սորանից մահաբեր վնասներ կը ծնին:

Պատուիրում է 30 տարեկաններին քահանայ և սար-  
կաւագ ձեռնադրել, 30 տարի էլ թույլ տալ նոցա իրանց  
պաշտօնը շարունակել. լիսուն տարեկանից մեծերին չը  
ձեռնադրել ոչ քահանայ և ոչ սարկաւագ. 50 տարե-  
կաններին չըթոյլատրել ամուսնանալ, համարելով որ  
այդ ժամանակ անձն ու միտքը տկարանալ է սկսում:

Առաքեալը եկեղեցու սեղանը խաչաձև քարից պատ-  
րաստել օրինադրելով՝ պատուիրում է, նշխարհը պա-  
տարագի օրը պատրաստեն և խաչաձև դրօշմելով՝ եփեն.  
մաքուր ամանի մէջ պահած գինին սեղան հանեն և ոչ  
ոք չըլանդգնի բաժակի հետ ջուր խառնել, համարելով  
որ այդ Աստուծոյ հաճելի չէ:

Սեղանը հաստատելուց յետոյ պէտք է եպիսկո-  
պոսը քահանաների, սարկաւագների և ժողովրդոց հետ  
աղօթք անի զգաստութեամբ արտասունքով, սաղմոսեր-  
գութեամբ ու Ս. Աւետարանի ընթերցմամբ և ապա պա-  
տարագ անի: Երբ սեղանը կը հաստատի, պէտք է հորթեր,  
եզներ և ոչխարներ մորթել \*), ինչպէս Սողոմոնն

\*) Այս պատուէրը սրբութեամբ կատարում է և շատ  
հարկաւոր է. վասն զի եկեղեցու օժման նաւակատիքը մեծ  
հանդիսով և զանազան տեղերից եկած ժողովրդեան ներկայու-  
թեամբ է կատարվում. որովհետև հոգեւորապէս մխիթարուելուց  
յետոյ՝ նիւթապէս ևս կշտանում են պատրաստած կերակրով  
և ուրտխութեան ու ցնծութեան տօն կատարելուց յետոյ  
դառնում են իրանց տեղերը:

արեց տաճարի շինութեան ժամանակ: Եկեղեցում պէտք  
չէ քրթմնջել (փսփոսալ), և միմեանց նայել. ոչ մի բան  
չըպէտք է խօսել բացի աղօթքից. երեսը դէպի արեւելք  
պէտք է կենալ և ձեռքերը բարձրացրած՝ խնդրելով ար-  
դարութիւն և Աստուծոյ պատրաստած արքայութեան  
արժանանալ:

Ժ-ը յօդուածից սկսած. խրատները և եպիսկո-  
պոսների, քահանաների և ժողովրդեան բարեկեցութեան  
համար. և իւրաքանչիւր լանցաւորին, ըստ յարմարադա-  
տութեան, պատիժ է սահմանուած: Աերևելիշած սահմա-  
նադրութիւնը Հայաստանեայցս եկեղեցին ընդունել է և  
գործադրում է որչափ հանգամանքները ներում են, բա-  
ցի իԹ-ը յօդուածից՝ որով պատուիրում է առաքեալը,  
քառասնորդաց պահքը պահել բացի շաբաթ և կիրակէ  
օրերից:

Ս. Առաքեալը իւր պատուէրները տալով՝ ասում է  
ժողովրդին. Հայրեր և եղբայրներ, դուք որ Տիրոջը  
յանձնեցիք ձեր անձը, այս ինձանից ձեզ և ձեզանից  
յետոյ եղողներին օրէնք լինի: Հաստատ կացէք այն ա-  
մեն բանի մէջ, որ ինձանից լսեցիք. մի անցնէք այդ  
սահմանից, որ ձեզ բարիք լինի և երկար ապրէք:  
Այս խօսքերը ձեզ մօտ լիշատակ լինի. մի մոռանաք  
ձեր աղօթքներում: Ազատ մնաք չարի փորձանքից. խա-  
ղաղութիւն ձեզ հետ»:

Սահմանադրութիւնը վերջանում է հետևեալ բա-  
ռերով. «Զայս օրէնսդրութիւն ես Զաքարիա աշակերտ  
առաքելոյն Թադէոսի գրեցի, որպէս լուսայ ի նմանէ,  
ամենայն հաւատացելոց ի Քրիստոս»:

Ս. ԲԱՐԳՈՒՂԻՄԷՈՍ

Աբգարի որդին և յաջորդը Անանէ կամ Անանուն Հինգ Թարի Հագիւ թագաւորեց Հալաճելով քրիստոնեաներին և նահատելով, մինչև որ միանգամ իւր պալատում մարմարէ սիւն կանգնացնելիս, սեան յանկարծ վայր ընկնելովն տակը մնաց և մեռաւ. իսկ Սանատրուկ, որ Աբգարի մահից յետոյ Վերին և Միջին Հայաստանի վերայ թագաւորեց և իւր ծծմայրն քաջ Բագրատունիների և Արծրունիների աջակցութեամբ զօրաժողով էր լինում բոլոր Հայաստանին տիրել՝ առանց պատերազմի հասաւ իւր նպատակին. որովհետև Եդեսիայի բնակիչները Անանէի մահից յետոյ խոստացան Սանատրուկին ընդունել, եթէ նա քրիստոնեաներին չի հալածիլ, իսկ Սանատրուկ թէև խոստացաւ, բայց յետոյ չկատարեց իւր խոստումը: Նա ոչ միայն քրիստոնեաներին սկսեց հալածել, այլև կոտորեց Աբգարի տան բոլոր արու գաւակներին. աղջիկներին բնակեցրեց Հաշտենից կողմերում, իսկ Աբգարի Հեղինէ կնոջը, որից շատ բարիք էր տեսել, Միջագետքի տիկնութիւն յանձնելով, բնակցրեց Խառան քաղաքում: Բայց Հեղինէ թագուհին չըկարողանալով տանել կռապաշտ ժողովրդի վայրենութիւնը գնաց Երուսաղէմ և սովի ժամանակ ժողովրդին մեծամեծ բարիքներ արեց. նա իւր բոլոր գանձերը ծախսելով՝ եգիպտոսից ցորեն բերել տուեց և բաշխեց կարօտեալներին և մեռաւ ու թաղուեց Երուսաղէմում:

Մինչդեռ գործքերը Հայաստանում այսպիսի դրութեան մէջ էին և քրիստոնեաները հալածվում էին, քա-

րողութեան պաշտօնով հետզհետէ Հայաստան եկան Ս. Բարդուղիմէոս, Ս. Թովմաս ու Յուզա—Թագէոս առաքեալները և Երուսաղէմում Յակովբ Տեառն—եղբօրից եպիսկոպոս ձեռնադրուած Եղիշէ՝ որ շատ մարդիկ աշակերտելով Քրիստոսի աւետարանին և մկրտելով՝ 70 թուին նահատակուեց Ուտի նահանգում:

Ս. Բարդուղիմէոս առաքեալը երկոտասանիցն էր. նա առաջին անգամ Թովմաս առաքեալի հետ քարոզութեամբ Հայաստանից անցնելով գնացել էր Հնդկաց աշուարհը. վերադարձած լինելով չըհաստան՝ Մարիամ Սուրբ կոյսի մահից յետոյ, 49 թուին նորա պատկերը հետն առած՝ նորից եկաւ Հայաստան ու սկսեց քարոզել, հաւատացեալներին խրախուսել և հաւատացելոց թիւը բազմացնել: Ս. Բարդուղիմէոս տեսնելով Սանատրկի խտասրտութիւնը, անցաւ Պարսկաստան, այնտեղ ևս աջողութիւն չըգտնելով, նորից վերադարձաւ Հայաստան Ս. Ղբակի, Նախիջևանայ և Գողթնեայ (Ագուլիսի) կողմերը. հաւատացեալների վերայ եպիսկոպոս ձեռնադրեց Պարսից մոզերից քրիստոնէութիւն ընդունած իւր Կոմսի աշակերտին և թողեց Գողթնեայ Ագուլիս գիւղում, իսկ ինքն Յակովբեան Յուզա—Թագէոսի հետ գիշերելով Օթեաց խաչ կոչուած տեղը (ըստ ոմանց Խոր—Վիրապի բլրի վերայ է) անցաւ Հեր և Զարևանդ (Ուրմիա) գաւառներն ու Անձևեաց կողմերը ամենայն տեղ քարոզելով՝ և հաւատացելոց թիւը շատացնելով: Ս. Բարդուղիմէոս Տիգրիս գետի եզերքում Կանգուար ամուր բերդին մօտիկ շինեց մի փոքրիկ տաճար. այնտեղ հաստատեց Աստուածամօր պատկերը և ժողովելով հաւա-

տաւոր կանայք և կոյսեր՝ նոցա գլխաւոր կարգեց Յուսիկ անուանով մի իշխանի Մարիամ քրոջը, իսկ ինքն սկսեց իւր քարոզութիւնը շարունակել Ստորին Հայքում. շատերին քրիստոնեայ դարձրեց, որոց մէջ նաև Սանատրուկ թագաւորի Ոգուհի կամ Թագուհի քոյրն ու հազարապետը: Սանատրուկ երբ լսեց այս, իւր քրոջ հետ շատերին նահատակեց, իսկ Ս. Բարդուղիմէոս Առաքեալին կաշին քերթել տուեց և խաչել տուեց Արիբանոս քաղաքում.—այն տեղ, որ յետոյ Ս. Առաքեալի անուանով Բարթուղիմ կամ Բարձ կոչուեց, իսկ այժմ Աղբակ է կոչվում:

Բացի Թաղէոս և Բարդուղիմէոս Ս. Առաքեալներէից Հայաստանում քարոզեց նաև Ս. Թաղէոս առաքեալի աշակերտ Եւստաթէոս կամ Ստաթէ, որ եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ քարոզեց Սիւնեաց (Պարալազեազ) աշխարհում և այնտեղ էլ նահատակուեց: Եւստաթէոս կամ Ստաթէն համարվում է եօթանասնից մէկը և թաղուած է Տաթևում:

Յ. Վ. Մ.

(Սրբաբար)

### Ս. ԹԱԳԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Տիրոջ հրամանաւն Հայաստան եկիր,  
 Նախկին լուսաւորիչ Թաղէոս առաքեալ.  
 Բանն անմահութեան մեզ քարոզեցիր,  
 Պարծանք Հայաստանի Թաղէոս առաքեալ:

Քարոզներովդ մեր աշխարհը փայլեցիր,  
 Սութ-խաւարից՝ լոյս աշխարհը հանեցիր.  
 «Առաջին հաւատացեալ» Հային կոչեցիր,  
 Պարծանք ամեն հայի Թաղէոս առաքեալ:

Մեծ արեգակ մեր աշխարհին ծագեցիր,  
 Ս. Նահատակն Սանդուխտ երկինք թռուցիր.  
 Թողնելով փառք, պարծանք՝ անցար զնացիր,  
 Մեզ Հայերիս մի մոռացիր՝ Թաղէոս առաքեալ:

Յակ. Ղաղարեանց



Handwritten text at the top edge, possibly a date or reference number.

~~Handwritten text, possibly a date or reference number, crossed out with a blue line.~~

Handwritten text in blue ink, possibly a signature or name.

Faint, illegible handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.



«Ազգային գրադարան»



NL0123966

